ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217-28.03.2022-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	««Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր պարբերության «Սահմանային վերահսկողության կամ սահմանային հսկողության այլ գործառույթների իրականացում» բառերն առաջարկում ենք գրել թավ տառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձեւը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձեւին (տեսքին):»: Բացի այդ, առաջարկում ենք «-» նշանը փոխարինել «՝» կետադրական նշանով՝ հիմք ընդունելով հայերենում կիրառվող տրոհության կետադրական նշանները:	Ընդունվել է: Լրացվող բառերը գրված են թավ տառերով:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	««Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մաս	«Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածում «12.1-րդ» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել «12.1-ին» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով դասական թվականների գրության ձեւը:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածում համապատասխան բառով է փոխարինվել:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	««Մաքսային կարգավորման մասին»	«Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ	Ընդունվել է: Նախագծի 5-րդ	Ընդունվել է:

		օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	հոդվածի 4-րդ մասում սահմանված է հետեւյալը. «Սույն հոդվածով նախատեսված գործառույթի իրականացման կարգը սահմանում է կառավարությունը::»: Վերոնշյալ կարգավորման վերաբերյալ, հարկ ենք համարում նշել հետեւյալը. 1) «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում բացակայում է Կառավարության կողմից սահմանվող կարգի ընդունման նախատեսվող ժամկետի վերաբերյալ անցումային դրույթը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաեւ՝ 2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:»: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում անցումային դրույթով նախատեսել Կառավարության կողմից սահմանվող կարգի ընդունման նախատեսվող ժամկետը:	հոդվածում նախատեսվել է 2-րդ մաս՝ կառավորության կողմից սահմանվող կարգի ժամկետը նախատեսելով ուժի մեջ մտնելուց հետո 3-ամսյա ժամկետ:	
4.	ՀՀ կառավարություն	««Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մաս	Բացի այդ առաջարկում ենք «կառավարություն» ձեւակերպումն համապատասխանեցնել «Մաքսային կարգավորման մասին» օրենքում կիրառված հասկացություններին, մասնավորապես կիրառել «Կառավարություն» կամ «Հայաստանի Հանրապետության կառավարություն» հասկացությունները՝ հաշվի առնելով Սահմանադրությամբ սահմանված «Կառավարություն» հասկացությունը, ինչպես նաեւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը՝ «1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է՝ «կառավարություն» բառը փոխարինելով «Կառավարություն» բառով:	Ընդունվել է:

			Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»:		
5.	ՀՀ կառավարություն	««Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մաս	«Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասում առաջարկում ենք հանել երկրորդ «:» կետադրական նշանը:	Ընդունվել է: Հանվել է ավելորդ կետադրական նշանը:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	««Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 20.12.2017թ. N 107 որոշման (Որոշում) 1-ին կետի «ж» ենթակետի համաձայն՝ որոշման 1-ին հավելվածի 1-ից 4-րդ կետերում նշված՝ անձնական օգտագործման ապրանքների կատեգորիաների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության անդամ պետության օրենսդրությամբ կարող են սահմանվել Որոշման 1-ին հավելվածով նախատեսված արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերից ավելի խիստ նորմեր, որոնց սահմաններում անձնական օգտագործման այդ ապրանքները ներմուծվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման: Որոշման 1-ին հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների համար, որոնք Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք են առաքվում փոխադրողի կողմից, մաքսատուրքեր, հարկեր չեն հաշվարկվում, եթե այդ ապրանքների արժեքը չի գերազանցում 1000 եվրոն և (կամ) քաշը չի գերազանցում 31 կիլոգրամը: Նույն հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների համար, որոնք Միության տարածք են առաքվում միջազգային փոստային առաքումներով, մաքսատուրքեր, հարկեր չեն հաշվարկվում, եթե այդ ապրանքների արժեքը չի գերազանցում 1000 եվրոն և	Ընդունվել է: «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի վերնագրում և 4-րդ մասում կատարվել են համապատասխան փոփոխություններ, ինչով պայմանավորված խմբագրվել նաև նախագծի վերնագիրը՝ «լրացումներ» բառից հետո լրացնելով «և փոփոխություններ» բառերով:	Ընդունվել է:

			(կամ) քաշը չի գերազանցում 31 կիլոգրամը: Նշված չափաքանակները գործում են մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 17.03.2022թ. N 35 որոշման: «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 249-րդ հոդվածի ***(Միջազգային փոստային առաքումներով ապրանքների և ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխումը)*** 4-րդ մասի համաձայն՝ միության անդամ չհանդիսացող պետությունից ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների համար վճարվում են միասնական մաքսային վճարներ (բացառությամբ Պետական տուրքի) հետևյալ միասնական դրույքաչափերով. 1) 0 տոկոս, եթե մեկ ամսվա ընթացքում տեղափոխվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 30 կիլոգրամը, իսկ մաքսային արժեքը չի գերազանցում 200 հազար դրամը. 2) 22.5 տոկոս, եթե մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 30 կիլոգրամը, իսկ մաքսային արժեքը գերազանցում է 200 հազար դրամը, սակայն չի գերազանցում 1000 եվրոյին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը. 3) 30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 30 կիլոգրամը գերազանցող յուրաքանչյուր կիլոգրամի համար Միության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված չափերը, եթե մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը գերազանցում է 30 կիլոգրամը, կամ եթե մաքսային արժեքը գերազանցում է 1000 եվրոյին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը:		

			Նույն մասի 2-րդ կետով սահմանված միասնական դրույքաչափերով մաքսային վճարները հաշվարկվում են ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի և սույն մասի 1-ին կետով սահմանված մաքսային արժեքի դրական տարբերության նկատմամբ: Օրենքի 249-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված է, որ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների համար, որոնք ՀՀ տարածք են ներմուծվում միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով, մաքսատուրքեր հարկեր չեն հաշվարկվում, եթե այդ ապրանքների մաքսային արժեքը չի գերազանցում 200 հազար դրամը և (կամ) քաշը չի գերազանցում 30 կգ-ը: Նշված շեմը սահմանված է միայն միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների նկատմամբ, ինչի արդյունքում այլ փոխադրողների կողմից առաքվող՝ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ Օրենքով սահմանված խստացնող նորմը չի կարող կիրառվել: Միաժամանակ, Օրենքի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված են մաքսատուրքերի, հարկերի միասնական դրույքաչափեր, որոնք չեն կարող կիրառվել՝ համաձայն Որոշման 1-ին կետի «и» ենթակետի, համաձայն որի՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված՝ նույն որոշման թիվ 1 հավելվածով նախատեսված արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերից ավելի խիստ այն նորմերի գերազանցման մասով, որոնց սահմաններում անձնական օգտագործման ապրանքները ներմուծվում են Միության մաքսային տարածք առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման, կիրառվում են մաքսատուրքերի, հարկերի միասնական դրույքաչափեր, որոնք նշված են նույն որոշման թիվ 2 հավելվածի 1-4-րդ կետերում:		

			Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է Օրենքի 249-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթի կիրառումը ոչ միայն միջազգային փոստային և սուրհանդակային առաքմամբ ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների, այլ նաև այլ փոխադրողների կողմից ՀՀ տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ կիրառել: Ուստի անհրաժեշտ է «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածում՝ 1) վերնագրից հանել «կողմից» բառը, 2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Միության անդամ չհանդիսացող պետություններից ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքները միջազգային փոստային կամ փոխադրողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվում են առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման, եթե ապրանքների արժեքը չի գերազանցում 200 հազար դրամը և (կամ) քաշը չի գերազանցում 31 կիլոգրամը:»:		